Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

1. **Աշխատանքների համառոտ նկարագրությունը.**

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

1) մշակել և իրականացնել հանրային իրազեկման և հաղորդակցության ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագիր, հանրակրթության, բուհական և շարունակական կրթության շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առարկայական ծրագրեր, հակակոռուպցիոն ռազմավարության և Հանձնաժողովի նպատակներից բխող կրթական ծրագրեր, մեթոդական ձեռնարկներ ու վերապատրաստումների ծրագրեր.
2) իրականացնել Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման արշավներ.
3) ապահովել հանրային ծառայողի բարեվարքության, ներառյալ՝ վարքագծի, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ քաղաքացիների կողմից ազդարարման կարգի մշակումը և դրա արդյունավետ գործարկումը.
4) ուսումնասիրել կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի վերաբերյալ առկա տեղական և միջազգային լավագույն փորձը և դրանց վերաբերյալ մշակել համապատասխան նյութեր:

2. **Փորձագետ ներգրավելու ժամկետը՝** մինչև 6 (վեց) ամիս:

Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 221.312 (երկու հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր տասներկու) ՀՀ դրամ:

3. **Փորձագետի պարտականությունները.**

1) բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքային ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծությունները և տեղեկանքները.
3) պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4) պահպանել աշխատանքի պաշտպանության անվտանգության ապահովման պահանջները.
5) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ‹‹Հանրային ծառայության մասին›› ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

4.Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.
2) Բարձրագույն կրթություն.
3) Հանրային ծառայության առնվազն մեկ կամ կրթության բնագավառի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

4) Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման ունակություն,
5) Հայերեն լեզվի տիրապետում.
6) Ռուսերեն և անգլերեն լեզուների (ազատ) տիրապետում.
7) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
8) Հաշվետվությունների մշակման ունակություն:

5. Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով **(դիմումի ձևը կցվում է).**
2) կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
3) աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթեր).
4) արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենները բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք.
5) մեկ գունավոր լուսանկար 3X4 սմ չափի.
6) անձնագիր կամ նույնականացման քարտ.
7) սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
8) ինքնակենսագրական.
9) հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է)**:

6. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

1) դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն,
2) ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

7. Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 18.10.2023թ. ներառյալ:

Փաստաթղթերը ընդունվում են միայն էլեկտրոնային տարբերակով միայն աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից մինչև 18:00-ն:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15
Հեռախոսահամարը՝ 012-77-77-24,
Էլ. փոստի հասցեն՝ hr.cpcarmenia@gmail.com

***Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել**

է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում: